



ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ ԹԱՅԵՖԻ ՈՒՆՏԻՆ

Լիբանանի քաղաքացիական պատերազմը եզրափակած Թայեֆի պատմական ուխտի կնքումի 33-ամեակին առթիվ Պեյրուֆի մեջ սեուտական դեսպանության նախագահությունը համագումար մը կազմակերպուեցաւ: Պեյրուֆի ԵՈՒՆԵՍԿՕ-ի դահլիճին մեջ, մասնակցութեամբ լիբանանցի անձնաւորութիւններու եւ Թայեֆի համաձայնութեան մեջ ներդրում ունեցած միջազգային կողմերու:



Վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթի յայտնեց, որ այս համագումարը կ'ապացուցէ, որ Սեուտական Արաբիա չէ լքած Լիբանանը, այլ կը մնայ անոր կողքին: Միքաթի հաւաստիացուց, որ գործող կառավարութիւնը յանձնառու կը մնայ իր պարտականութիւններուն, որովհետեւ այդպէս նշուած է Սահմանադրութեան մեջ:

Մարտահոսանքի նախագահ Ալէյման Ֆրանսիէ շեշտեց, որ իրենք հանդիսութեան կը մասնակցին որովհետեւ Թայեֆի մասնիկ են, ոչ թէ որպէս նախագահական թեկնածու: Եպիսկոպոս Պոլոս Մաթար շեշտեց Թայեֆին վերադառնալու կարեւորութիւնը, զայն համարելով լաւ առիթ Լիբանանի վերականգնումի համար: Ան նաեւ նշեց, որ քաղաքական համակարգի փոփոխութիւնը ենթակայ է հետեւողական երկխօսութեան:

Սեուտական Արաբիոյ դեսպան Ռալֆտ Պոլսարի յայտնեց, որ այս հանդիսութեան կազմակերպումը ցոյց կու տայ, որ Ռիատ յանձնառու կը մնայ Լիբանանի անվտանգութեան եւ միասնականութեան: Ըստ դեսպանին, Ֆրանսա հաւաստիացուցած է, որ Թայեֆը փոխելու մտադրութիւն չկայ:

Միջազգային քաղաքական գործիչ եւ դիւանագետ Լախտար Իպրահիմի իր կարգին յայտնեց, որ Թայեֆի

ողջունելու Պըրրին՝ սահմանագծումի հոլովոյթը շուրջ 9 տարի առաջ սկսելու համար: Ան նշեց, որ խորհրդարանի նախագահին հետ արծարծած է նախագահական պաշտօնի թեկնածուներուն անունները: «Մեր թեկնածուն Միշել Մուաուատն է, սակայն կան այլ խմբաւորումներ, որոնք թող առաջադրեն իրենք թեկնածուներուն անունները», պահանջեց ճոմպալաթ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՈՉԵՐ

Յոյն ուղղափառներու Պեյրուֆի առաջնորդ Էլիաս Աուտ եպիսկոպոսը երեսփոխաններուն կողմէ ուղղել անսալու իրենց խղճի ձայնին եւ համախմբուելու Լիբանանի փրկութեան գաղափարին շուրջ, բռնել ժողովուրդին ձեռքը եւ դուրս գալ անդունդէն: «Ինչպէս կ'ըլլայ, որ քրիստոնեայ



համարուող ղեկավարներ կը մասնակցին ժողովուրդի նուաստացումին: Անոնք Աստուած չեն ճանչար, պարզապէս կը խօսին ու չեն գործեր: Արդեօ՞ք քրիստոնէութիւնը դատարկ խոստում է», հարց տուաւ Աուտ: Ան յիշեցուց, որ ժողովուրդը երեսփոխաններ ընտրած է որպէս ներկայացուցիչներ, որպէսզի անոնք պաշտպանեն մարդոց շահերը եւ պահպանեն երկրին ժողովրդավարական կեանքը: «Թող ժողովներ գումարեն եւ ընտրեն նախագահ մը, որ կարողութիւն ունի վերականգնելու երկիրը, սակայն ոչինչ կ'ուզէ իր անձին համար», պահանջեց առաջնորդը:

Իսկ մարտիներու Պըշարա Ռահի պատրիարքը յայտնեց, որ նախագահը հանրապետութիւնը կառավարողն է եւ Սահմանադրութեան հետեւողը, ուստի պէտք է զայն անյապաղ ընտրել՝ պահպանելու համար հայրենիքը:

ԻՍՐԱՅԷԼԵՆ ԽԱՆՏՈՒՄ

Իսրայէլի բանակը երէկ յայտնեց, որ լայնածաւալ զինավարժութիւններ սկսած է կատարել Լիբանանի հետ սահմանէն ոչ-հեռու: Այս ծիրին մեջ ապահովական տեղե-



կութիւններ երէկ նշեցին, որ իսրայէլեան ռազմական օդանաւեր երէկ խախտած են Լիբանանի օդային տարածքը եւ Շըպայի ուղղութեամբ սկսեալ դիտարկող թռիչք կատարած են զանազան շրջաններու վերեւ, հասնելով մինչեւ արեւմտեան Պեքաա:

ՔՈՆԵՐԱՆ ԸՆԴԴԵՍ ՔՈՎԻՏԻՆ



Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւնը յայտարարեց, որ հրատապ կարիք կայ 10,2 միլիառ տոլարի՝ Լիբանանի մէջ ջրէրայի տարածումը զսպելու համար, նկատի առնելով երկրի տնտեսական ծանր վիճակը:

Լիբանանի Առողջապահութեան նախարարութիւնը յայտարարեց, թէ երկրին մէջ կայ ջրէրայով վարակումի 10 նոր պարագայ, ջրէրայի հիւանդներուն թիւը բարձրացնելով 426-ի: Անցնող ժամերուն ջրէրայի պատճառով որդէ մահ չէ գրանցուած, հետեւաբար գոհերուն ընդհանուր թիւը տակաւին 18 է:

Այն ինչ կը վերաբերի ջրվիտի համաճարակի նորագոյն վիճակին, ապա գրանցուած է 73 նոր վարակում եւ մէկ մահ, ուստի վարակումներու ընդհանուր թիւը բարձրացած է մէկ միլիոն 219 հազարի:

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԻՆ

Հռոմի Ֆրանչիսկոս պապը եզրափակեց Պահրէյն կատարած իր պատմական ուղեւորութիւնը, որ տեւեց չորս օր: Այս պապին առաջին այցելութիւնն էր Շոցի շրջան: Ան



երէկ առաւօտեան մեկնելէ առաջ վերահաստատեց, որ կ'աղօթէ Միջին Արեւելքի տառապող ժողովուրդներուն համար: Սրբազան քահանայապետը իր այցելութեան մեծամասնութիւնը յատկացուցած էր մահմետականներու հետ երկխօսութեան ամրապնդումին եւ մարդկային իրաւունքներու պաշտպանութեան: Մասնամալի եկեղեցւոյ մէջ կղերականներուն հետ տեսակցութեան ընթացքին պապը յատուկ ողջոյն յղեց լիբանանցիներուն՝ ըսելով. «Կ'աղօթեմ յատկապէս այդ սիրելի երկրին համար, որ կը բոլորէ դժուարութիւններ: Նաեւ կը զօրակցիմ Միջին Արեւելքի մէջ ցաւող բոլոր ժողովուրդներուն»: Ֆրանչիսկոս պապը իր աղօթքներուն մէջ անդրադարձաւ Ուքրանիոյ զարգացումներուն եւ Հռոմ վերադառնալէ առաջ կղերականներուն կողմէ ուղղեց դառնալու միասնականութիւն կառուցողներ եւ պահպաններ՝ յանուն այլ կրօնքներու ներկայացուցիչներուն հետ երկխօսութեան եւ համագործակցութեան: Իսկ երիտասարդներու հետ հանդիպումին ընթացքին պապը շեշտեց, որ աշխարհի խաղաղ ապագան կարելի է երաշխաւորել միայն եղբայրութեամբ եւ համերաշխութեամբ:

ՔԻՇԻ ԹԵՐՐԱՆԵՆ ԴԺԳՈՅ

Ուքրանիոյ Արտաքին գործերու նախարարութիւնը Թեհրանին կողմէ ուղղեց իմասալու, թէ «ռուսական ռմրագործութիւններուն մասնակցիլը պիտի ունենայ հետեւանքներ, որոնք աւելի մեծ են քան Մոսկուային օգնելու օգուտները»: Իրանի արտաքին գործերու նախարարը օր մը առաջ խոստովանած էր, որ Ուքրանիոյ պատերազմէն առաջ Իրան սահմանափակ թիւով անօդաչու թռչող սարքեր տրամադրած է Ռուսիոյ: Նշենք, որ Ուքրանիա շաբաթներ շարունակ կ'աղաղակէր այդ մասին, սակայն Թեհրան ոչ-պաշտօնական խորհրդակցութիւններով միշտ կը ժխտէր անօդաչու սարքեր տրամադրելու ամբաստանութիւնը: Թեհրան միաժամանակ նշեց, որ նշեալ սարքերը Ուքրանիոյ դէմ գործածելու մասին տեղեկութիւնները պիտի արծարծէ ռուսներուն եւ ուքրանացիներուն հետ: Ըստ իրանցի պաշտօնատարներուն, այս ուղղութեամբ տեսակցութիւն մը կազմակերպուած էր Լեհաստանի մէջ, սակայն ուքրանացի ներկայացուցիչը վերջին պահուն մերժած է մասնակցիլ քննարկումներուն՝ ամբիկեան ճնշումի տակ:

ԱՏՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱԿԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ

Արցախի Հանրապետութեան արտաքին գործերու նախարար Դաւիթ Պապայեան ժխտեց ատրպէյճանական համացանցային էջերուն վրայ տարածուող տեղեկութիւն-



ները, թէ Լաչինի միջանցքով Արցախ կը տեղափոխուին զինուորական սարքեր: «Այս աշխարհաքաղաքական խափանում է, տեղեկատվական արշաւ եւ ահաբեկչութիւն: Ամբողջ երկայնքով տեսախցիկներ տեղադրուած են եւ ամէն ինչ կ'երեւի: Ատրպէյճանական պնդումը նաեւ հարկած է ռուս խաղաղապահներուն, մասնաւոր Սոչիի եռակողմ զագաթածրոյթէն ետք», ահազանգեց Պապայեան:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԸՆՆԱՐԿՈՒՄ



Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան նախագահ Ռալֆտ ճոմպալաթ երէկ այցելեց Այն Թիւն, ուր խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի հետ քննարկեց երկրի քաղաքական ու ապահովական զարգացումները, ծովային սահմանագծումի եւ նախագահական ընտրութեան թղթածրարները: Ծոմպալաթ յայտնեց, որ եղած է

